

Արամ Խաչատրյան
*Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի
կրպակի գիտաշխատող*
Էլ. հասցե՝ *aramkhachatryan93@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2025.1-180

ՎԱԶԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ «ՊԱՐԱՆՈՅԱ...» ՀՈԴՎԱԾԻ ՇՈՒՐՋ ԾԱՎԱԼՎԱԾ ԲԱՆԱՎԵՃԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1990-ական թթ. նորանկախ Հայաստանի գրական դաշտը բնութագրվում է գեղագիտական որոնումներով, ավանդույթի վերաիմաստավորման փորձերով ու գաղափարական նոր ուղղությունների բախումներով: Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում Վազգեն Գաբրիելյանի «Պարանոյա. ինչո՞ւ, հանուն ինչի՞» հոդվածի շուրջ ծավալված բանավեճը, որն արձանագրեց գրական դաշտում առկա սերնդային և արժեքային տարբերությունները: Այս հոդվածը նպատակ ունի վերլուծելու այդ բանավեճի հիմնական թեմաները, ներկայացնելու տարբեր կողմերի դիրքորոշումները և քննարկելու դրանց նշանակությունը նորագույն հայ գրականության զարգացման գործընթացում:

Հիմնաբառեր. գրական բանավեճ, Վազգեն Գաբրիելյան, գեղագիտական արժեքներ, ավանդույթ, գրական մամուլ, գրաքննադատություն, նոր սերունդ:

Ներածություն

Անտիպոեզիայի շուրջ ծավալվող գրական բանավեճին զուգահեռ «Գրական թերթում» տպագրվեց գրականագետ Վազգեն Գաբրիելյանի «Պարա-

նոյա. ինչո՞ւ, հանուն ինչի՞» բանավիճային հոդվածը՝ հետանկախության առաջին տասնամյակում հայ գրականության մեջ արմատավորված նոր միտումների, մասնավորապես, սեռական թեմաների, գեեհկաբանության ու անհարկի խրթնաբանությունների վերաբերյալ: Հոդվածը ոչ այնքան բանավեճ հրահրելուն էր միտված, որքան մտահոգություններով հանդես գալուն՝ այն գիտակցմամբ, որ իր մտքերը կարող են նաև ընկալվել որպես «հետադիմական»։ «...Ինձ կմեղադրեն պահպանողականության, ավանդական չափանիշներին կառչած լինելու, կյանքի արատները և ձևափոխումները չտեսնելու, կեղծ բարոյականություն քարոզելու և այլ մեղքերի մեջ: Եվ այնուամենայնիվ, ես չեմ կարող խաբել ինքս ինձ ու ընթերցողին և նրա հետ չկիսել իմ մտահոգությունները մեր գրականության մեջ օրինաչափություն դարձող մի քանի երևույթների մասին» (Գաբրիելյան, 2000, թիվ 19–20): Թերթի խմբագրությունը, որպես հետգրություն, հրավիրում է բանավեճի՝ արդի հայ գրականության զարգացման միտումների շուրջ:

Մեթոդ

Աշխատանքում կիրառվել են վերլուծական և գուգադրական մեթոդները, ինչպես նաև ժամանակի մամուլի ուսումնասիրության արդյունքում փորձ է արվել բանավեճը ներկայացնել առավել լայն համապատկերում:

Արդյունքներ և քննարկում

Գաբրիելյանն առանձնացնում է հետանկախության առաջին տարիներից հայ գրականության մեջ արմատավորված երկու միտում, նախ՝ «լեզվա-ոճական խրթնաբանությունների, մտածական խճողումների, անհասկանալի վերացարկումների» առկայությունը, երկրորդ՝ «գրական ավանդական չափանիշներին հակադրվելու հիվանդագին եղանակով» սեռական թեմաների ու բաց տեսարանների նկարագրությունները:

Ըստ Գաբրիելյանի՝ գրականությունը կյանքն է, «սակայն ոչ բոլոր մանրամասնություններով»։ «Գրականությունը պիտի լինի գրողի վերաբերմունքն ու արձագանքը այդ կյանքին: Մարդկային բոլոր հարաբերությունները, հոգեվիճակները կարող են գրականության նյութ դառնալ, չկան արգելված թեմաներ, բայց դրանք պատկերելու համար դարեր ի վեր գրականությունը մշակել է սկզբունքներ, չափանիշներ, որ ավանդաբար փոխանցվել, նորացվել ու հարստացվել են տաղանդավոր գրողների ու քննադատների կողմից: Եվ մշտապես կարևորվել է գրականության՝ մարդուն բարձրացնող, կենսական լիցքեր հաղորդող, գեղեցիկ զգացումներ ներարկող դերը» (Գաբրիելյան, 2000, թիվ 19–20):

Գաբրիելյանը հանդես է գալիս գրականության՝ հարյուրամյակներով ձևավորված չափանիշների դիրքերից՝ վկայակոչելով օրինակներ հայ դասական գրականությունից և միաժամանակ հավելելով, որ «խելված հոգիների» գրական կերպավորումը ոչ միայն ավելորդ չէ, այլև անհրաժեշտ է, եթե նրանք պատկերված են կյանքի համապատկերում, վիպական ստեղծագործության

մեջ պատճառահետևանքային կապերով, որպեսզի տեսանելի լինի և՛ լավը, և՛ վատը, և՛ իր բնույթով անբարոյականը, և՛ կյանքի թելադրանքով անբարոյացածը» (Գաբրիելյան, 2000, թիվ 19-20): Այս տեսանկյունից Գաբրիելյանը չի արդարացնում Նորայր Աղալյանի և Գուրգեն Խանջյանի վերջին շրջանի գործերը՝ համոզված լինելով, որ, մասնավորապես, Աղալյանի «Ապոկալիպսիս» վիպակում պատկերված «Սողոմ-Գոմորի, համատարած աղբի ու խառնակության, բանտի ու խմբային բռնաբարության խորհրդանիշ-պատկերներն իրենց խտացումներով անհուսության, ժխտման տրամադրություն կարող են ներարկել ընթերցողին» (Գաբրիելյան, 2000, թիվ 19-20):

Հողվածի երկրորդ մասում քննադատն անդրադառնում է գլխավոր շարժառիթին՝ «Գարուն» ամսագրում և «Գրական թերթում» իր առաջին գրական քայլերն անող Արփի Ոսկանյանի գործերին, մասնավորապես, վերջինիս «Մանիֆեստը» ներկայացնելով որպես «կնոջ «ազատագրության» նոր ըմբռնման հայտարարագիր» (Գաբրիելյան, 2000, թիվ 19-20):

Ինչպես նախորդ՝ անտիպոեզիայի շուրջ ծավալված բանավեճի պարագայում (Բեկյան, 2000, թիվ 13-14), այս դեպքում ևս անմիջապես արձագանքում է բանաստեղծ Զավեն Բեկյանը (Բեկյան, 2000, թիվ 21-22): Բեկյանը մի կողմ է թողնում «լեզվա-ոճական խրթնաբանությունների ու անհասկանալի վերացարկումների» հարցն ու անդրադառնում սեռականի խնդրին: Ըստ նրա՝ Գաբրիելյանն ընկնում է ծայրահեղությունների մեջ. «Հարցը չպետք է ծայրահեղացվի այնքան, որ սեռականը, պոռնկագրական հատկանիշներից գերծ սեռականը (որքան էլ դժվար է այս սահմանազատումը), դուրս մղվի գրականությունից: Կրքերը, մարդկային վսեմագույն տարերքը ընդհատակ չպետք է մղվեն, տաբու չպետք է դրվի ի աղքատացումն գրական ստեղծագործության» (Բեկյան, 2000, թիվ 21-22): Ըստ Բեկյանի՝ Գաբրիելյանի կողմից առանձնացված գործերը «պոռնկագրություն չեն», որովհետև «չկա համապատասխան, այսպես ասած, ատրիբուտիկան» (Բեկյան, 2000, թիվ 21-22): Տպավորությունն այն է, որ Բեկյանը հողվածը տպագրում է ընդամենը բանավեճին մասնակցելու համար, որովհետև չկան բովանդակային-գաղափարական ընդհանրացումներ, հակադարձումներ և հիմնավորումներ:

Հողվածի սկզբում Բեկյանը նշում է, որ զոջում է անտիպոեզիայի վերաբերյալ բանավիճային հողվածով հանդես գալու համար: Ավելի ուշ մեկ այլ առիթով վերաձևակերպելով միտքը՝ նա գրում է, որ բանավեճին մասնակցել է, ոչ թե բանաստեղծության այդ տեսակին դեմ լինելու, այն պատճառով, որ Մ. Պետրոսյանն իր հողվածում ինչ-ինչ հավակնություններով «անտիպոեզիան» հռչակում էր հայ բանաստեղծության... գլխավոր ուղղությունը...» (Բեկյան, 2004, թիվ 32): 2024 թվականին Բեկյանը առանձին գրքով հրատարակել է տարբեր տարիներին մամուլում հրապարակված խոհագրությունները, հողվածներն ու գրախոսությունները՝ ներառյալ բանավիճային հողվածները, սակայն չի ներառել Գաբրիելյանի հողվածի դեմ գրված «Ինչպես ցանկապատել արգելված պտղատուն» հողվածը (Բեկյան, 2024, 168 էջ): Արդյո՞ք սա ևս վերաբերմունքի փոփոխության ցուցիչ չէ:

Արևելյան Անգլիայի համալսարանի ժամանակակից գրականության պրո-

Ֆետոր Ռեյչել Փոթթերն իր «Անպարկեշտ մոդեռնիզմ. գրաքննություն և փորձ, 1900–1940» գրքում, անդրադառնալով մոդեռնիստական գրականության շուրջ ծավալված գրական բանավեճերին և իրավական սահմանափակումներին, եզրահանգում է, որ «պոռնկագրական» պիտակի տակ արգելված գրական փորձերը ոչ միայն չեն սահմանափակել, այլ հաճախ խթանել են գեղագիտական նորարարությունը: Փոթթերի վերլուծության համաձայն, գրականության և «պոռնկագրության» միջև սահմանը մշտապես փոփոխվում է, և այդ շարժունակությունը հենց գրական դաշտի ինքնանորոգման մեխանիզմներից մեկն է (Potter, 2013, էջ 3–6): Համաձայնելով գրականագետի տեսակետին, նշենք, որ Հայաստանում հետանկախության տարիներից ի վեր գրականության ոլորտում իրավական սահմանափակումներ չեն կիրառվել և յուրաքանչյուր հեղինակ ազատ է եղել գրելու այն բովանդակությամբ և ձևով, որով ցանկացել է: Ուստի 1990–ականների բացարձակ ազատության պայմաններում ստեղծված գրականությունը չէր կարող և չի ունեցել ինքնանորոգման մեխանիզմ:

Բեկյանի հոդվածին հաջորդում է սիրիահայ բանաստեղծ, արձակագիր Մարուշ Երամյանի հոդվածը (Երամյան, 2000, թիվ 23–24): Մեր իրականության մեջ գրաքննադատության և ինքնաքննադատության պակասի համատեքստում, հոդվածագիրը ընդգծում է Գաբրիելյանի «գնահատելի կեցվածքը»՝ «խոցելի երեւոյթներուն մասին» խոսելու համար: Գրականության ավանդական և ժամանակակից չափանիշների՝ հաճախ ժխտողական հակադրության առնչությամբ հոդվածագիրը նշում է. «Հետաքրքրականն այն է սակայն, որ երբ գրող մը կը մնայ աւանդական ժամանակին մէջ, կը մեղադրուի ինքնուրոյն չըլլալու, իր ձայնը գտած չըլլալու «յանցանք»-ով, նոյն այն քննադատներուն կողմէ, որոնք «արդիական» գրողները կը քննադատեն» (Երամյան, 2000, թիվ 23–24): Ըստ Երամյանի, գրողի այլընտրանքը կարող է լինել «արդիականորեն ավանդապաշտ» կամ «ավանդապահորեն արդիական» լինելը: Ինչ վերաբերվում է Գաբրիելյանի հոդվածի շարժառիթին՝ Արփի Ոսկանյանին, Երամյանը կարծում է, որ վերջինս, լինելով սկսնակ և «տակավին ոչ ծանոթ» չէր կարող հավակնություն ունենալ «նման յայտարարութեան մը ծանրութիւնը իր ուսերուն կրելու. «Քանի՞նէր կան Ոսկանեանի նման գրող: Աւելի ճիշտ կըլլար ըսել՝ քանի՞ներո՞ւ է, որ կը հետեւի Ոսկանեան, Վ. Գրիգործան, Գ. Աղաջանեան, թէ՛ Կ. Խողիկեան: Անոնցմէ իւրաքանչիւրը իր անունով է որ կը գրէ, եւ ոչ մէկ ընթերցող անոնց գրութիւնները կընդունի որպէս սերունդի մը (ալ ճիշտ մնաց 20-րդ դարու հայ կնոջ) խոսքը» (Երամյան, 2000, թիվ 23–24):

Արդի հայ գրականության զարգացման միտումների, հատկապես վերջինիս ախտաբանական շերտերի վերաբերյալ այս բանավեճը կարող էր չափազանց շահավետ լինել թե՛ գրողների ու գրաքննադատների, թե՛ նոր իրողությունների պայմաններում գրականության չափանիշների հստակեցման տեսանկյունից, սակայն, ցավոք, Մարուշ Երամյանի հոդվածից հետո բանավիճային այլ հոդվածներ չտպագրվեցին:

Նույն շրջանում թե՛ գրական մամուլում տպագրված որոշ հոդվածներ, թե՛

ՀԳՄ կողմից կազմակերպված որոշ կյոթ սեղան-քննարկումներ կարելի է ընկալել որպես անուղղակի արձագանք այս բանավեճին:

Գրականագետ Զավեն Ավետիսյանը հանդես է գալիս գրախոսությամբ՝ Նորայր Աղալյանի վերջին երկու տարիներին տպագրված գործերի վերաբերյալ (Ավետիսյան, 2001) («Ապոկալիպսիս», «Ճայր», «Թաղման թափոր», «Տղամարդը և կինը»): Ինչպես անտիպոեզիայի շուրջ ծավալվող բանավեճի պարագայում, այս անգամ ևս Ավետիսյանը կարծես թե խուսափում է բանավեճին ուղղակի մասնակցելուց և գրախոսության միջոցով է փորձում անդրադառնալ խնդրահարույց հարցերին՝ այնուամենայնիվ նշելով. «Նորայր Աղալյանի գործերը գրախոսողս ակամայից դառնում եմ այդ սպասվող բանավեճի մասնակից» (Ավետիսյան, 2001, թիվ 27-28):

Թեև Աղալյանի վերջին շրջանի գործերում «խեղված հոգիների» և սեռաբանական շերտերի առկայությունը Ավետիսյանի կողմից բնորոշվում է որպես «գոտկատեղից ներքև գրականություն», այնուամենայնիվ փորձ է արվում նաև արդարացնելու՝ որպես պատճառահետևանքային կապ մատնանշելով երկրում տիրող բարքերն ու անկուսմային վիճակը. «Ոչ բառացի, բայց հիշեցնեն Շիլլերի մի աֆորիզմը՝ աշխարհը ղեկավարում է սովը և սերը, ինչը այս իրականության մեջ երևում է մեղալի երկրորդ երեսի տեսքով՝ սովը՝ սովամահություն, սերը՝ սեռաբանություն: Այս դեպքերում է, որ գրականությունը մարդկային հոգու աշխարհից իջնում է մարմնի տիրույթները: Երևույթը մենք տեսնում ենք մեր ժամանակակից գրականության մեջ, տվյալ դեպքում Նորայր Աղալյանի վերոհիշյալ գործերում: Համառոտե՛ն ստեղծվում է գրականության մի որակ, ուղղություն, որ դժվար բնորոշելի է, բայց պայմանականորեն այն կարելի է անվանել գոտկատեղից ներքևի գրականություն» (Ավետիսյան, 2001, թիվ 27-28):

Եթե ըստ Վազգեն Գաբրիելյանի գրականությունը կյանքն է, «սակայն ոչ բոլոր մանրամասնություններով», ապա Զավեն Ավետիսյանի ընկալմամբ գրականությունը կյանքն է իր բոլոր մանրամասնություններով՝ նույնիսկ ամենագարշելի. «Տիաճ է, անշուշտ: Բայց կարո՞ղ ենք Նորայրի գիրքը դեն նետել, ասել, որ սա չի տեղավորվում բարոյականության սահմաններում, այն դեպքում, երբ կյանքն ինքն է դուրս եկել այդ սահմաններից...», - գրում է նա (Ավետիսյան, 2001, թիվ 27-28):

«Գրական թերթի» հաջորդ համարում տպագրվում է բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանի հարցազրույցը (Միլիտոնյան, 2001, թիվ 3-4): Արդի գրականության մեջ գրական չափանիշների բացակայությունը Միլիտոնյանը պայմանավորում է ժամանակակից գրականության խնդիրներով զբաղվող գրականագետների բացակայությամբ. «Վազգեն Գաբրիելյանը գրական անձաշակության մասին լավ հոգված հրապարակեց «Գրական թերթում»: Բայց գրականագետներն այսօր զբաղված են գիտական գործերով, դասականներ ուսումնասիրելով: Այսօրվա գրականությունը մնացել է ինքն իր հույսին և ցավոք իր գնահատողները չունի: Թյուրիմացություններից շատերն առաջանում են հենց դրանից: Երբ լինի գրական բարձր չափանիշ, ամեն բան ինքնին իր տեղը կընկնի: Այսօրվա գրականությունն, անշուշտ, պետք է ունենա

իր գրականագետը, և այդ գրականագետը պետք է բարձրաճաշակ լինի» (Միլիտոնյան, 2001, թիվ 3-4):

Հատկանշական է նաև այն, որ Վազգեն Գաբրիելյանը «Պարանոյա. ինչո՞ւ, հանուն ինչի՞» հոդվածի համար՝ որպես «Գրական թերթի» 2000 թվականի լավագույն հրապարակում, ստանում է թերթի տարվա մրցանակ (Գրական թերթի մրցանակները, 2001, թիվ 3-4): Սա կարող է ընկալվել որպես թերթի խմբագրության կողմից Վազգեն Գաբրիելյանի հոդվածում արձարժված հարցերի վերաբերյալ համաձայնություն:

Որոշ ժամանակ անց՝ մայիսին, ՀԳՄ նախագահ է ընտրվում «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր Լևոն Անանյանը (Հայաստանի Գրողների միության 13-րդ համագումարը, 2001, թիվ 9-10), իսկ օգոստոսի 31-ին՝ շուրջ երեք ամիս դադարից հետո, լույս է տեսնում «Գրական թերթի» հերթական համարը՝ նոր խմբագրով. Ալբերտ Իսոյանին փոխարինում է «Գարուն» ամսագրի գրականության բաժնի խմբագիր Կարինե Խոդիկյանը: Նույն շրջանում Գաբրիելյանի հոդվածի գլխավոր շարժառիթի՝ Արփի Ոսկանյանի առաջին՝ «Ծիկ» ժողովածուն «մամուլում հավատաքնության ենթարկվելուց» (ըստ Լևոն Անանյանի) հետո դրվում է քննարկման ՀԳՄ կլոր սրահում (Կլոր սրահ, 2001, թիվ 14):

Թե՛ այս քննարկումը, թե՛ սրան անմիջապես հաջորդած հեղինակների (Նարինե Ավետյան, Գայանե Բաբայան) գործերի քննարկումները պետք է ընկալվեն որպես նույն բանավեճի անուղղակի շարունակություն:

Ոսկանյանի գրքի քննարկման արդյունքների վերաբերյալ «Գրական թերթում» հրապարակված սյույակից պարզ է դառնում, որ մասնակիցները բարձր են գնահատել վերջինիս գիրքը, իսկ ներածական խոսքում կարդում ենք. «Արփի Ոսկանյանի հանդեպ մամուլի և գրաքննադատության սրված ուշադրությունն, այնուամենայնիվ, հիմք է հավատալու, որ ասպարեզ մտած երիտասարդ գրողն իր հետ բերել է այն ճիշտ շնչառությունը, որի արտանետումները գրականության ճահճացած մթնոլորտը կենդանացնելու միտում ունեն» (Կլոր սրահ, 2001, թիվ 14): Ըստ գրականագետ Սուրեն Աբրահամյանի՝ Արփի Ոսկանյանի «պոեզիան գալիս է անտիպոեզիայի շերտերից և ունի փիլիսոփայական մեկնաբանական հենարաններ» (Կլոր սրահ, 2001, թիվ 14), իսկ արվեստաբան Վարդան Զալոյանը կարծում է, որ վերջինիս գրականությունը «թերհավատություն է ազգային արժեքների հանդեպ». «Արփիի գրականությունը ագրեսիա չի ինչ-որ մեկի բարոյական արժեքների դեմ: Դա թերհավատություն է ազգային արժեքների հանդեպ» (Կլոր սրահ, 2001, թիվ 14):

Նույնպիսի բարձր գնահատականի է արժանանում ՀԳՄ Կլոր սրահում երիտասարդական սեկցիայի նախաձեռնությամբ քննարկված Նարինե Ավետյանի «Փնթի տողեր» բանաստեղծությունների ժողովածուն (Կլոր սրահ, 2001, թիվ 15): Իր խոսքում «Գրական թերթի» խմբագիր Կարինե Խոդիկյանը անուղղակի կերպով հաստատում է Վազգեն Գաբրիելյանի այն միտքը, որ Արփի Ոսկանյանը փորձել է «կնոջ «ազատագրության» նոր ըմբռնման հայտարարագիր» ներկայացնել. «Այսօր, այս երիտասարդ աղջիկները գրականություն են բերում հայ կնոջ ազատ, ըմբոստ և անբարդույթ կերպարը: Ժա-

մանակ հետո ասելու ենք, ահա, այսպիսին է եղել 20-րդ դարավերջի հայ կնոջ կերպարը» (Կլոր սրահ, 2001, թիվ 15): Խողիկյանի հետ համաձայնում է նաև բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանը:

Իսկ ահա Գայանե Բաբայանի «Մենապար» բանաստեղծությունների ժողովածուի քննարկման ժամանակ Սուրեն Աբրահամյանի ելույթը դառնում է առավել սուր՝ հաճախ ժխտողական. «Գրականագետ Սուրեն Աբրահամյանի ելույթը զայրույթ էր ոչ միայն Գայանեի, այլև վերջերս գրականություն մտած մի քանի երիտասարդ աղջիկների հանդեպ «Խնչ են ուզում ասել այս աղջիկները. երբ գիրք են հրատարակում: Իրենց եսից դուրս ոչինչ չեն տեսնում: Եվ ամփոփեց՝ «Այս բանաստեղծությունը ձանապարհ չունի» (Կլոր սրահ, 2001, թիվ 17): Բանաստեղծ Թադևոս Տոնոյանը ևս հանդես է գալիս նման սուր ձևակերպումներով. «Գոնե «Գրական թերթը» հանկարծ չփորձի գրել, թե Գայանեն հայ կնոջ կերպար է ներկայացնում, որովհետև ոչ մի առնչություն չունի հայ կնոջ կերպարի հետ» (Կլոր սրահ, 2001, թիվ 17): Կարճ ժամանակ անց Տոնոյանը «Գրական թերթում» հանդես է «երիտասարդ բանաստեղծուհիների» վերաբերյալ առանձին հոդվածով՝ հիմնականում բարոյական տեսանկյունից (Տոնոյան, 2001, թիվ 23):

Եզրակացություն

Այսպիսով՝ Վազգեն Գաբրիելյանի «Պարանոյա. ինչո՞ւ, հանուն ինչի՞» հոդվածով սկիզբ առած գրական բանավեճը կարևոր հանգրվան է հետանկախական շրջանի հայ գրականության զարգացման ընթացքի օրինաչափությունների բացահայտման և արժեքային բախումների տեսանկյունից: Հոդվածում շեշտադրվում է գրականության՝ հարյուրամյակների ընթացքում ձևավորված գեղագիտական և բարոյական չափանիշների պահպանման անհրաժեշտությունը: Գաբրիելյանի մոտեցումը ընդունելի չեն համարում ժամանակակից որոշ գրողներ և գրականագետներ՝ շեշտադրելով գրականության ազատության, և կյանքի նույնիսկ ամենատհաճ դետալների ընդգրկման իրավունքը:

Բանավեճը բացահայտում է գրական դաշտի ներսում գոյություն ունեցող երեք հիմնական բևեռներ. առաջին՝ ավանդապաշտ դիրքորոշում (սակայն ոչ հետադիմական), որը հանդես է գալիս դասական չափանիշների պաշտպանությամբ՝ չժխտելով նորարարությունների անհրաժեշտությունը (Գաբրիելյան, Տոնոյան, մասամբ՝ Միլիտոնյան), երկրորդ՝ արդիական կամ «գոտկատեղից ներքև» գրականության քննադատությունը, սակայն՝ սոցիալ-հոգեբանական համատեքստում հիմնավորված (Ավետիսյան), և երրորդ՝ գրականության ազատության, սեռականության պատկերման պաշտպանություն՝ որպես ինքնության, դիմադրության և ազատագրման ուղի (Բեկյան, Ոսկանյան, Երամյան):

Բանավեճի խորքային արժեքը կայանում է ոչ միայն սեռական թեմաների կամ լեզվաոճական նորարարությունների շուրջ տարբեր դիրքորոշումների բախման մեջ, այլ այն հարցադրումների շրջանակում, թե ինչպե՞ս է գրականությունը արձագանքում հասարակական փոխակերպումներին, ար-

Ժեհանակարգային ճգնաժամերին և գեղագիտական նորմերի վերախմատավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- Ավետիսյան, Զ. (2001): Այս ամենը բեմադրեցի՝ նայելով ձեզ: «Գրական թերթ», թիվ 27-28:
- Բեկյան, Զ. (2000): Անտիպոեզիայի ժամանակը: «Գրական թերթ», թիվ 13-14:
- Բեկյան Զ. (2000): Ինչպես ցանկապատել արգելված պտղատուն: «Գրական թերթ», թիվ 21-22:
- Բեկյան, Զ. (2004): Ստորումներ ժամանակակից հայ բանաստեղծության մասին: «Գրական թերթ», թիվ 32:
- Բեկյան, Զ. (2024): *Բանաստեղծության «ներս» և «դուրս»*: Երևան, «Անտարես»:
- Գաբրիելյան, Վ. (2000): Պարանոյա. ինչո՞ւ, հանուն ինչի: «Գրական թերթ», թիվ 19-20:
- Գրական թերթի մրցանակները (2001): «Գրական թերթ», թիվ 3-4:
- Երամեան Սարուշ (2000): Չափանիշեր, չափանիշեր: «Գրական թերթ», թիվ 23-24:
- Կլոր սրահ (2001): «Գրական թերթ», թիվ 14:
- Կլոր սրահ (2001): «Գրական թերթ», թիվ 15:
- Կլոր սրահ (2001): «Գրական թերթ», թիվ 17:
- Հայաստանի Գրողների միության 13-րդ համագումարը (2001): «Գրական թերթ», թիվ 9-10:
- Միլիտոնյան, Է. (2001): Պոեզիան չի սիրում փառքի հոշոտումներ: «Գրական թերթ», թիվ 3-4:
- Տոնյան, Թ. (2001): Ուզում եմ երկարաձգել ապաշխարելու ժամանակը: «Գրական թերթ», թիվ 23:
- Potter, Rachel (2013). *Obscene Modernism: Literary Censorship and Experiment, 1900-1940*. Oxford: Oxford University Press.

Арам Хачатрян

Младший научный сотрудник Института
литературы имени Манука Абега
Эл. адрес: aramkhachatryan93@mail.ru

ДИСКУССИЯ ОБ ЭСТЕТИЧЕСКИХ И ЦЕННОСТНЫХ ПРОБЛЕМАХ ЛИТЕРАТУРЫ, РАЗВЕРНУВШАЯСЯ ВОКРУГ СТАТЬИ ВАЗГЕНА ГАБРИЭЛЯНА «ПАРАНОЙЯ...»

Литературное поле новой независимой Армении 1990-х годов характеризуется эстетическими поисками, переосмыслением традиций и столкновениями новых идеологических направлений. В этом контексте особую важность приобретает дискуссия вокруг статьи Вазгена Габриэляна «Паранойя. Почему, ради чего?», зафиксировавшая поколенческие и

ценностные различия в литературном поле. Целью настоящей статьи является анализ основных тем этой дискуссии, представление позиций различных сторон и обсуждение их значения в процессе развития новейшей армянской литературы.

Aram Khachatryan

*Junior researcher of the Institute of
Literature after Manuk Abeghyan
Email: aramkhachatryan93@mail.ru*

DISCUSSION ON THE AESTHETIC AND VALUE ISSUES OF LITERATURE UNFOLDED AROUND VAZGEN GABRIELIAN'S ARTICLE "PARANOIA..."

The literary field of newly independent Armenia in the 1990s is characterized by aesthetic explorations, the rethinking of traditions, and clashes between new ideological directions. In this context, the discussion around Vazgen Gabrielyan's article "*Paranoia. Why, for what?*", which recorded generational and value-based differences in the literary field, acquires particular significance. The purpose of this article is to analyze the main topics of this discussion, present the positions of the various parties, and discuss their significance in the development of modern Armenian literature.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. ապրիլի 28-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մայիսի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին: